Կարգապահական գործ թիվ ԿԳ-15122

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 302-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/178-Ա
ՓԱՍՏԱԲԱՆ ԱՎԵՏԻՔ ՈՒՆՈՒՊՕՂԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյանի, **Խորհրդի անդամներ**՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի, Հարություն Հարությունյանի, Մարտուն Փանոսյանի, Կարեն Սարդարյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Լուսինե Սահակյանի և Տիգրան Խուրշուդյանի կազմով,

քարտուղարությամբ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Ավետիք Ունուպօղլյանին (արտոնագիր թիվ 263) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>

«Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (այսուհետ՝ Դպրոց) կողմից 16.07.2015թ. ներկայացված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան **Ավետիք Ունուպօղլյանը** (արտոնագիր թիվ 263) 2015թ. հունվար-հունիս (ներառյալ) չի մասնակցել պարտադիր վերապատրաստման դասընթացներին և չի լրացրել պարտադիր վերապատրաստման որևէ ժամ:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի տեղակալի 24.07.2015թ. թիվ 248-Ա/ԿԳ-15122 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Ավետիք Ունուպօղլյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 ենթակետի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Կանոնագիրք**) 2.8.2 կետի խախտման հատկանիշներով:

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Փաստաբան Ավետիք Ունուպօղլյանը 12.08.2015թ. էլեկտրոնային փոստով ուղարկված դիմումով հայտնել է, որ 2015 թվականի փետրվարի 27-ից մեկնել է Ռուսաստանի Դաշնություն և չի իմացել 2015թ. հունվար-հունիս ամիսների

ընթացքում վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականության մասին:

Նույն դիմումով Ավետիք Ունուպօղլյանը խնդրել է հարգելի համարել իր բացակայությունը և իրեն հանրավորություն տալ հաջորդ կիսամյակում անցնել վերապատրաստման դասընթացները:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդը՝ ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը (այդ թվում՝ Դպրոցի 16.07.2015թ. ներկայացված տեղեկանքով), հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) 2015թ. առաջին կիսամյակի (հունվար-հունիս (ներառյալ)) ընթացքում Պալատի, Դպրոցի և Պալատի կողմից սահմանված կարգով հավատարմագրված կազմակերպությունների կողմից կազմակերպվել են 94 (իննսունչորս) վերապատրաստման դասընթացներ:

Նշված փաստը հաստատվում է Պալատի վերապատրաստման հարցերով համակարգողի 11.12.2015թ. տեղեկանքով:

2) Փաստաբան Ավետիք Ունուպօղլյանը 2015թ. հունվար-հունիս (ներառյալ) չի մասնակցել պարտադիր վերապատրաստման դասընթացներին և չի լրացրել պարտադիր վերապատրաստման որևէ ժամ:

Նշված փաստը հաստատվում է Դպրոցի 16.07.2015թ. տեղեկանքով:

3) Փաստաբան Ավետիք Ունուպօղլյանի նկատմամբ սահմանված կարգով և ժամաքանակով վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով կարգապահական վարույթ հարուցվել է առաջին անգամ:

Նշված փաստը հաստատվում է Պալատի աշխատակազմի ղեկավարի 12.10.2015թ. տեղեկանքով:

4) Փաստաբան Ավետիք Ունուպօղլյանը հաշվետու ժամանակահատվածում բացակայել է Հայաստանի Հանրապետությունից:

Նշված փաստը հաստատվում է Ավետիք Ունուպօղլյանի կողմից 12.08.2015թ. ներկայացված դիմումով և անձնագրի պատճենով:

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից 12.10.2015թ. տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Ավետիք Ունուպօղլյանի (արտոնագիր 263 ստացած 10.10.1995թ.) նկատմամբ 2006-2015թթ. ընկած ժամանակահատվածում **կարգապահական վարույթներ չեն հարուցվել** (չհաշված ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 24.07.2015թ. թիվ 248-Ա/ԿԳ-15122 որոշմամբ հարուցված կարգապահական գործը):

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Ավետիք Ունուպօղլյանի նկատմամբ կարգապահական գործի վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Փաստաբանների վերապատրաստման հետ կապված հարաբերությունները

կարգավորվում են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի և Պալատի խորհրդի 18.12.2014թ. թիվ 35/8-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Փաստաբանների վերապատրաստման» կարգի (**այսուհետ՝ Կարգ**) դրույթներով:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի համաձայն՝ ***փաստաբանը պարտավոր է՝ ... 4.1) սահմանված կարգով և ժամաքանակով մասնակցել սույն օրենքով նախատեսված վերապատրաստման դասընթացներին:***

Կանոնագրքի 2.8.2 ենթակետը սահմանում է, որ ***փաստաբանը պարտավոր է Պալատի խորհրդի կողմից սահմանված կարգով և ժամաքանակով մասնակցել Օրենքով նախատեսված վերապատրաստման դասընթացներին:***

Կարգի 8-րդ կետի համաձայն՝ *Յուրաքանչյուր կիսամյակի (վեց ամսվա) համար փաստաբանը՝ Կարգով նախատեսված ժամկետում և ընթացակարգով, պետք է անցնի* ***12 (տասներկու)*** *ակադեմիական ժամ (****այսուհետ՝ ժամ, 1 (մեկ) ակադեմիական ժամը հավասար է 40 (քառասուն) րոպեի****) վերապատրաստում: Կիսամյակի հաշվարկը՝ ա) սկսվում է հունվար ամսից և ավարտվում հունիսին (ներառյալ), կամ բ) սկսվում է հուլիս ամսից և ավարտվում դեկտեմբերին (ներառյալ):*

Փաստաբան Ավետիք Ունուպօղլյանի նկատմամբ սույն կարգապահական վարույթը հարուցվել է այն հիմքով, որ վերջինս՝ խախտելով Կարգի վերոնշյալ կանոնը, 2015թ. առաջին կիսամյակի (հունվարից հունիս (ներառյալ)) ընթացքում չի մասնակցել պարտադիր վերապատրաստման դասընթացներին:

Պալատի խորհուրդն արձանագրում է, որ 2015 թվականի հունվար-հունիս (ներառյալ) ամիսներին Պալատը կազմակերպել է 94 (իննսունչորս) վերապատրաստման դասընթացներ (չհաշված առցանց վերապատրաստման դասընթացները), որոնք վարել են 49 դասավանդողներ: Դասավանդողների մեջ այլ մասնագետներից բացի ներառվել են նաև 25 փաստաբաններ, 4 դատավորներ և 11 գիտնականներ: Ընդ որում, թեմաները նախապես հաստատված և տեղադրված են եղել Պալատի կայքում, ինչպես նաև յուրաքանչյուր ամսվա դասացուցակները հաստատվել և տեղադրված են եղել Պալատի կայքում:

Նման պայմաններում՝ Պալատը խորհուրդն արձանագրում է, որ փաստաբան Ավետիք Ունուպօղլյանն օբյեկտիվորեն ունեցել է հնարավորություն հաշվետու ժամանակահատվածում անցնելու տվյալ կիսամյակի համար պարտադիր 12 (տասներկու) ժամ ժամաքանակով վերապատրաստման դասընթացները, սակայն չի կատարել օրենքով նախատեսված պարտականությունը:

Ինչ վերաբերվում է Ավետիք Ունուպօղլյանի այն պատճառաբանությանը, որ վերապատրաստման դասընթացներին չի մասնակցել Հանրապետությունից բացակայելու հիմքով, ապա հարկ է նշել, որ Կարգի 29-րդ կետի 6-րդ համաձայն՝ *ՀՀ փաստաբանների պալատը չի ենթարկում կարգապահական պատասխանատվության վերապատրաստմանը չմասնակցած՝ ... մինչև հեռավար կամ առցանց ձևով վերապատրաստման հնարավորություն ընձեռելը՝ այլ պետությունում մշտապես (մեկ տարվա ընթացքում 183 օրից ավել) բնակվող փաստաբաններին, եթե նրանք նախապես գրավոր (կամ էլեկտրոնային փոստով) տեղեկացրել են ՀՀ փաստաբանների պալատին:*

Նման պայմաններում Կարգի վերոնշյալ կանոնի հաշվառմամբ փաստաբան Ավետիք Ունուպօղլյանը պարտավոր էր Պալատին **<u>նախապես գրավոր</u>** (կամ էլեկտրոնային փոստով) **<u>տեղեկացնել Հանրապետությունից բացակայության մասին, ինչը չի արել:</u>**

Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պալատը հաշվետու ժամանակահատվածում փաստաբանների համար չի ապահովել հեռավար կամ առցանց ձևով վերապատրաստման հնարավորությունը, Պալատի խորհուրդը փաստաբան Ավետիք Ունուպօղլյանի կողմից վերապատրաստումը չանցնելու վերաբերյալ նշված հիմքը համարում է հարգելի:

Պալատի խորհրդի՝ «ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 18.12.2014թ. թիվ 35/8-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Փաստաբանների վերապատրաստման» կարգում լրացումներ կատարելու հարցը քննարկելու մասին» 29.10.2015թ. թիվ 28/8-Լ որոշմամբ (**այսուհետ՝ Որոշում**)՝ Կարգը լրացվել է **30.**[1] կետով, համաձայն որի՝ ***եթե փաստաբանը գրավոր դիմում (այդ թվում՝ էլեկտրոնային փոստի միջոցով) է ներկայացնում Պալատին՝ պարտավորվելով հաշվետու կիսամյակում չանցած վերապատրաստման դասընթացների ժամերն իր հաշվին անցնել հաջորդ կիսամյակում, ապա՝ ... վերապատրաստման դասընթաց չանցնելու հիմքով փաստաբանի նկատմամբ առաջին անգամ հարուցված կարգապահական վարույթը կարճվում է:***

Որոշման 4-րդ կետով սահմանվել է, որ *Որոշումը տարածվում է* ***2015 թվականի հունվարի 1-ից (Կարգն ուժի մեջ մտնելուց) հետո*** *ծագած հարաբերությունների վրա (տրվում է հետադարձ ուժ):*

Պալատի աշխատակազմի ղեկավարի 12.10.2015թ. տեղեկանքից բխում է, որ փաստաբան Ավետիք Ունուպօղլյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի և Կանոնագրքի 2.8.2 ենթակետի խախտման հատկանիշներով, այն է՝ վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով, կարգապահական վարույթ հարուցվել է <u>առաջին անգամ</u>:

Կարգում վերոնշյալ լրացումը կատարելուց հետո, **փաստաբան Ավետիք Ունուպօղլյանը 12.08.2015թ. դիմում է ներկայացրել Պալատին:**

Նման պայմաններում, Պալատի խորհուրդը՝ հիմք ընդունելով Որոշման 4-րդ կետի կարգավորումը (որոշմանը հետադարձ ուժ տալը), հաշվի առնելով նաև Ավետիք Ունուպօղլյանի դիմումը՝ գտնում է, որ Կարգի 30.[1] կետով սահմանված արտոնությունը կիրառելի է նաև փաստաբան Ավետիք Ունուպօղլյանի նկատմամբ, իսկ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի և Կանոնագրքի 2.8.2 ենթակետի խախտման հատկանիշներով հարուցված սույն կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Միաժամանակ՝ Պալատի խորհուրդը հարկ է համարում փաստաբան Ավետիք Ունուպօղլյանի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ Կարգի 30.[3] կետի համաձայն՝ նույն <u>Կարգի 30.[1] կետով սահմանված արտոնությունից փաստաբանը կարող է օգտվել միայն մեկ անգամ:</u>

Ելնելով վերոգրյալից, Պալատի խորհուրդը՝ ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.7-րդ և 39.9-րդ հոդվածներով, Կարգի 30.[1] կետի, ինչպես նաև Որոշման պահանջներով

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Ավետիք Ունուպօղլյանի (արտոնագիր թիվ 263) նկատմամբ 24.07.2015 թվականին հարուցված թիվ 248-Ա/ԿԳ-15122 կարգապահական գործի վարույթը կարճել՝ փաստաբանի նկատմամբ Պալատի խորհրդի 18.12.2014թ. թիվ 35/8-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված

«Փաստաբանների վերապատրաստման» կարգի 30.[1] կետով սահմանված արտոնությունը կիրառելու հիմքով:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Ավետիք Ունուպօղլյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ որոշումն ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում բողոքարկման համար սահմանված ժամկետն անցնելուց հետո:*

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյան